ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8
0054, Ереван, Давидашен 4, ул. А. Микояна 109/8
109/8, A. Mikoyan str., Davidashen 4, Yerevan 0054
Հեռ./Тел./Tel. (+374 10) 31 77 17
Ֆաքս/Факс/Fax (+374 10) 36 34 49
Էլ. փոստ / E-mail: mes@mes.am

№_____

‘ ’ _____ 2015թ.

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
ՀԿ նախագահ Շ. Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր՝ 10.08.2015թ.
№257-3-ի գրության

Հարգելի տիկին Դոյդոյան

«Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում ՀՀ երկրորդ գործողությունների ծրագրի 11-րդ կետով նախատեսված հանձնառության (Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում) 1-ին (Ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու տեխնիկասարքավորումների գնման գործընթացի ապահովում) և 4-րդ (Կայքերի գործարկում, թիրախ համայնքների ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում) կետերի կատարման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը:

Խոշոր (20000 և ավելի բնակչություն ունեցող) համայնքներն այս պահի դրությամբ 16-ն են:

Վերջիններիցս ստացված տեղեկատվության համաձայն՝ հանձնառության կատարումը համայնքների կողմից կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Համայնքներ, որոնք գտնվում են տեխնիկասարքավորումների գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթհայթման գործընթացում (Աբովյան, Էջմիածին, Կապան, Գորիս, Արտաշատ, Գավառ, Մասիս, Ալավերդի, Սևան, Աշտարակ, Արթիկ):

2. Համայնքներ, որոնք ձեռք են բերել տեխնիկասարքավորումներ և իրականացնում են փորձնական հեռարձակումներ (Վանաձոր, Չարենցավան, Հրազդան):

3. Համայնքներ, որոնք ձեռք են բերել տեխնիկասարքավորումներ և իրականացնում են հեռարձակումներ (Արմավիր. Գյումրի):

Բացի այդ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի գյուղական համայնքը Եվրոպայի խորհրդի Տարածքային և տեղական իշխանությունների կոնգրեսի կողմից իրականացվող Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում ներկայացրել է հանրային միջոցառումների առցանց հեռարձակման կազմակերպման հայտ: Հայտը հավանության է արժանացել և այժմ իրականացվում է անհրաժեշտ տեխնիկասարքավորումների գնման գործընթացը:

Ինչպես երևում է վերոգրյալից՝ խոշոր համայնքների մեծ մասը դեռևս ձեռք չի բերել տեխնիկասարքավորումներ: Հիմնական պատճառը ֆինանսական միջոցների սղությունն է (պետական բյուջեով համայնքներին այդ հարցում որևէ աջակցություն չի նախատեսվում): Չնայած այդ հանգամանքին, բոլոր նշված համայնքները պատրաստակամ են, և իրենց մոտակա ծրագրերում նախատեսել են նշված հանձնառության կատարման ուղղությամբ իրականացնել համապատասխան միջոցառումներ:

Նշված հանձնառության ամբողջական իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները մոտավոր հաշվարկով կկազմեն 16,000.0 հազ.դրամ (մեկ համայնքի համար մոտ 1.0 մլն դրամ):

Հարգանքով՝

Հ. Հակոբյան

Կատարող՝ Կ. Բակոյան
Հեռ.՝010-51-13-47